ANQA-2018/29

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 հոկտեմբերի 2018 թ. N 29

ՀՀ ՊՆ «ՄԱՐՇԱԼ Ա. ԽԱՆՓԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	**ՀՀ ՊՆ «Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան» պետական հիմնարկ**
Գործունեության հասցեն	**Արշակունյաց 89, Երևան, Հայաստան**
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	**Չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2018թ. հոկտեմբերի 27-ի դռնբաց նիստում «ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան» պետական հիմնարկի (այսուհետ՝ ՌԱՀ կամ Համալսարան), ՀՀ ՊՆ ներկայացուցիչների, փորձագիտական խմբի ղեկավարի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց **Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի** ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՌԱՀի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ՌԱՀի գործողությունների ծրագիրը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը՝ ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	31 օգոստոս 2017
ՌԱՀ-ի ինքնավերլուծության ներկայացում՝	21 փետրվար 2018
փորձագիտական այցի իրականացում՝	04–07 հունիս 2018
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	05 սեպտեմբեր 2018
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	08 հոկտեմբեր 2018

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ՌԱՀ-ը, համաձայն իր առաքելության, ‹‹ՀՀ ՊՆ համակարգում բակալավրի և լրացուցիչ կրթական ծրագրերով բարձրագույն ռազմական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն է, որը հիմնվելով ազգային կրթական փորձի և ռազմական կրթության ոլորտում առկա միջազգային զարգացումների վրա, իր գործունեությունը նպատակաուղղում է բարձրագույն ռազմական ավիացիոն, կապի և հակաօդային պաշտպանության մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը՝ ՀՀ ՊՆ կրթական և ռազմական կարիքները բավարարելու նպատակով››: ՌԱՀ-ի հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարիքները բավարարելու համար կրթական ծառայությունների մատուցումը, ռազմակրթական և գիտական ծրագրերի ստեղծումն ու դրանց իրականացումը:

ՌԱՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որն էլ համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին: Ռազմավարական ծրագրի մշակումն իրականացվել է ՀՀ ԶՈՒ 2016-2020թթ. զարգացման պլանին համապատասխան՝ ռազմական կրթության և ՌԱՀ-ին վերաբերող մասով: Դրական է շահակիցների մասնակցությունը ռազմավարական պլանավորման գործընթացում: ՌԱՀ-ի արտաքին շահակիցների շրջանակը ներառում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբը, ՀՀ ՊՆ շահագրգիռ վարչությունները, համալսարանի թողարկող կադրերով համալրվող զորամասերը, իսկ ներքին շահակիցներն են դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչները, կուրսանտները: Ռազմավարական պլանավորման տեսակետից անհրաժեշտ է, որ ՌԱՀ-ը ուշադրությունը կենտրոնացնի կրթության առաջանցիկության խնդրի վրա, որը կնպաստի համալսարանի զարգացման ուղղությունների հստակեցման և նորարարական ուսումնասիրությունների իրականացմանը:

Առկա է շրջանավարտների հետ մշտական կապ, զորամասերից մշտապես ներկայացվում են կարծիքներ շրջանավարտների վերաբերյալ, որոնց հիման վրա բարելավվում են կրթական ծրագրերը: Սակայն կարևոր է, որ շրջանավարտների վերաբերյալ զորամասերից ստացվող կարծիքները պարբերաբար քննարկվեն ամբիոնների պետերի և դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ՝ ՄԿԾ-ներում իրականացվող փոփոխությունները նպատակային դարձնելու համար:

ՌԱՀ-ն իրականացնում է բարձրագույն ռազմամասնագիտական կրթությամբ բակալավրի աստիճանով մասնագետների պատրաստում՝ 4-ամյա և 5-ամյա ծրագրերով, միամյա դասընթացներ ‹‹ՀՕՊ միջոցների շահագործում» և ‹‹Ռադիոկապի ռազմական տեխնիկա» մասնագիտություններով, ինչպես նաև կազմակերպում է սպայական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ: Համալսարանի չորս ֆակուլտետներում իրականացվում է բակալավրական 13 կրթական ծրագիր, որոնցից «Անօդաչու թռչող սարքերի շահագործում և կիրառում» մասնագիտությունը առաջին անգամ ներդրվել է 2017-2018 ուսումնական տարվանից:

ՌԱՀ-ում ՄԿԾ-ների մշակման ժամանակ, ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևակերպելիս, պետական կրթական չափորոշիչների հետ համատեղ հիմք է ընդունվել ՌԱՀ առաքելությունը՝ զուգահեռ համապատասխանություն ստեղծելով նաև ՈԱԾ-ի 6-րդ մակարդակի բնութագրերի հետ: Փորձ է արվել նաև համապատասխանեցնել ՄԿԾ վերջնարդյունքները Դուբլինյան նկարագրիչների և ABET-ի չափանիշների հետ: Դրական է, որ ՌԱՀի ՄԿԾ-ները պարբերաբար վերանայվում և բարելավվում են արտաքին շահակիցների արձագանքների հիման վրա: Բացի այդ, ՀՀ նախագահի անմիջական ենթակայությամբ գործող Գլխավոր ռազմական տեսչությունը (ԳՌՏ) յուրաքանչյուր 5 տարին մեկ իրականացնում է համալսարանի գործունեության, այդ թվում նաև կրթական ծրագրերի, հիմնական և փոփոխական անձնակազմի գործիմացության համընդհանուր գնահատում հաստատված չափանիշներով: Ուսումնասիրության ժամանակ ՌԱՀ-ը դիտարկվում է միաժամանակ և՛ որպես զորամաս, և՛ որպես ռազմաուսումնական հաստատություն: Սակայն ՄԿԾ-ների վերանայման գործընթացներում կուրսանտների ընդգրկվածությունը թույլ է, ինչն էլ խոչընդոտում է կուրսանտների լիարժեք մասնակցությանը իրենց կրթության կազմակերպման գործընթացին: ՄԿԾ-ներում քիչ են նաև ճարտարագիտական բլոկի առարկաները, որը կարող է խոչընդոտել ծրագրերով սահմանված կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Դասավանդման ժամանակ կիրառվում է առաջադրանքի վրա հիմնված ուսուցում, որը նպաստում է կուրսանտների մոտ վերլուծական և կառավարչական հմտությունների զարգացմանը: Անհրաժեշտ է, որ ՌԱՀ-ը ուսուցման գործընթացում խթանի նորարական մեթոդների կիրառումը, որոնք կնպաստեն կուրսանտների մոտ հետազոտական կարողությունների զարգացմանը և կմեծացնեն պատասխանատվության մակարդակը:

Դրական է, որ ՌԱՀ-ում առկա է կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար բարձր որակավարում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Պաշտոնների տեղակալումը ՌԱՀ-ում մրցույթային է, որը կազմակերպում են ՌԱՀ-ը և ՊՆ-ն համատեղ: ՌԱՀ-ի ՄԿԾ-ներում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ընդհանրական են, առկա չեն դասախոսական կազմի տարակարգերի պաշտոնի անձնագրեր:

Միևնույն ժամանակ որոշ մասնագիտությունների գծով սերնդափոխության սահուն իրականացման վտանգ կա, քանի որ նեղ մասնագիտական առարկաների գծով մասնագետները շատ չեն: Մեծ է դասախոսների ծանրաբեռնվածությունը, ինչը խոչընդոտում է դասախոսների կողմից հետազոտությունների իրականացմանը: Կադրերի համալրման տեսանկյունից, կարևոր է, որ ՌԱՀ-ը հիմնարար առարկաների համար մշտապես համագործակցի քաղաքացիական բուհերի հետ: Կարևոր է նաև ապահովել մեկ առարկայի համար երկու և ավելի դասախոսների առկայություն, որը կնպաստի կազմի կայունությանը, ծանրաբեռնվածության փոքրացմանը և կաշխուժացնի կոլեգիալ հաղորդակցությունը դասախոսների միջև:

Համալսարանում պարբերաբար անցկացվում են դասախոսների վերապատրաստումներ և որակավորման բարձրացման միջոցառումներ, ինչպես նաև այդ նպատակով տեղի են ունենում կարճաժամկետ և երկարաժամկետ գործուղումներ: ՌԱՀ-ում իրականացվում են ՊԴ կազմի գնահատումներ ինչպես կուրսանտական հարցումների, այնպես էլ պարբերաբար իրականացվող դասալսումների, Որակի ապահովման և վերլուծության (այսուհետ՝ ՈԱՎ) բաժնի կողմից իրականացվող ընթացիկ մշտադիտարկումների, կուրսանտների տարեկան առաջադիմության դինամիկայի վերլուծությունների միջոցով, որոնք նպաստում են դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Ընդհանուր առմամբ, ՌԱՀ-ի ռեսուրսները այսօր ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Միևնույն ժամանակ կարևոր է, որ ՌԱՀ-ը և ՀՀ ՊՆ-ն ուղիներ որոնեն ՌԱՀ-ի զարգացմանը նպատակաուղղված անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու համար: Մասնագիտական լսարանները, լաբորատորիաները և վարժասրահները տեխնիկական միջոցներով վերահագեցման անհրաժեշտություն ունեն, ինչի մասին փաստեցին նաև փորձագիտական խմբի հետ հանդիպման մասնակիցները: ՌԱՀ-ում կատարված հարցումները ցույց են տալիս, որ կուրսանտական և ՊԴ կազմը բավարարված չեն գրադարանային ռեսուրսներից, որը մտահոգիչ է ՄԿԾ-ների իրականացման և վերջնարդյունքների ձեռք բերման տեսանկյունից: ՌԱՀ-ում որոշ սարքավորումների, լաբորատորիաների և տեխնիկայի բացակայության պատճառով պարապմունքների մի մասն անցկացվում է զորամասերում և քաղաքացիական բուհերում: Կուրսանտների և ՊԴ կազմը նպատակահարմար է համարում հենց համալսարանում այդ պարապմունքների անցկացումը, ինչը կնվազեցնի և ժամանակային, և տրանսպորտային ծախսերը:

ՌԱՀ-ում գործում են կուրսանտների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ: Վերջին տարիներին կուրսանտների թվի նվազում է նկատվում ՀՕՊ և Կապի ֆակուլտետներում, ի տարբերություն ավիացիայի ֆակուլտետի:

Համալսարանի կուրսանտները հիմնականում գոհ են կրթական միջավայրից և կրթության կազմակերպումից: Կուրսանտները հնարավորություն ունեն դասախոսների հետ համատեղ մասնակցելու հետազոտական աշխատանքներին, միևնույն ժամանակ նրանց առավել մեծ ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում կնպաստի կուրսանտների վերլուծական կարողությունների զարգացմանը: ՌԱՀ-ում առկա են կուրսանտներին տրամադրվող կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման մեխանիզմներ, որոնք նպաստում են մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և կուրսանտների կարիքների հաշվի առնմանը:

ՌԱՀ-ում առկա են հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն և կարճաժամկետ ծրագրեր, սակայն հետազոտական թեմաների համար սահմանված չէ քայլերի հերթականությունը, և դրանցում արտացոլված չեն ՌԱՀ-ի մասնագիտական ուղղվածությունները: ՌԱՀ-ում զինվորական կոչումների հավասարեցումը գիտական աստիճաններին ոչ միշտ է արդարացված և վտանգում է համալսարանում գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունավետությանը: Թույլ է ՌԱՀի և գիտական հաստատությունների միջև հետազոտությանն առնչվող կապը, որը կարող էր արտահայտվել համատեղ գիտական ծրագրեր իրականացնելով: Համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակվող հոդվածների սակավությունը անհանգստացնող է, քանի որ այն ցույց է տալիս իրականացվող հետազոտական աշխատանքների ցածր ակտիվությունը: Իրականացվող հետազոտությունները դեռևս չեն հանդիսանում ուսուցման բաղկացուցիչ մաս, որը կարող է բացասաբար ազդել կրթական վերջնարդյունքների ձևավորման վրա: Կարևոր է, որ ՌԱՀ-ի կողմից նորարարական բնույթի ուսումնասիրությունները խրախուսվեն, որոնցում ներգրավված կլինեն ինչպես դասախոսներ, այնպես էլ կուրսանտներ:

Միջազգային կապերի և համագործակցության ոլորտում համալսարանի իրավասությունները խիստ սահմանափակ են, և համալսարնի գործունեությունը այս ոլորտում կարգավորում է ՀՀ ՊՆ համապատասխան բաժինը: Միևնույն ժամանակ, միջազգային համագործակցության խոչընդոտների հաղթահարման հնարավորությունները համալսարանի կողմից դեռևս ուսումնասիրված չեն, որը խանգարում է միջազգայնացման և արտաքին կապերի հետագա զարգացմանը: Ներկայում, ՌԱՀ-ում պլանավորված չեն համապատասխան գործողություններ, առկա չեն անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ արտաքին կապերի համակողմանի զարգացումը, ՀՀ բարձրագույն կրթական համակարգին ինտեգրվածության շրջանակի ընդլայնումը, օտարերկրյա ՌԱՀ-երի հետ համագործակցությունը, միջազգային փորձի ուսումնասիրությունները խթանելու համար: ՌԱՀ-ը պետք է փորձի միջազգայնացման ոլորտում ոչ ստանդարտ, նորարարական մեթոդներ օգտագործի ոլորտի զարգացումը խթանելու համար:

Թեև ՌԱՀ-ում տարվում են օտար լեզուների իմացության մակարդակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ, այնուամենայնիվ ինչպես դասախոսների, այնպես էլ կուրսանտների շրջանում անգլերենի, իսկ կուրսանտների շրջանում նաև ռուսերենի իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտություն կա, որը կնպաստի օտար լեզուներով գրականության ուսումնասիրմանը, արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացման գործընթացում դասախոսների և կուրսանտների ներգրավվածության բարձրացմանը: Անհրաժեշտություն կա նաև ՄԿԾ-ներում ներառել տարածաշրջանի /վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն, պարսկերեն/ լեզուների ուսումնասիրությունը:

Համալսարանի կառավարման համակարգն ունի իր յուրահատկությունը, քանի որ բուհական համակարգին բնորոշ կառուցվածքը մեկտեղված է զորամասային կարգավիճակից բխող պահանջների հետ: ՌԱՀ-ի պետը ի պաշտոնե իրավասու է միանձնյա որոշումներ կայացնել, որոնք կենսագործվում են հրամաններով և պարտադիր են կատարման զորամասի ողջ անձնակազմի համար: Մյուս կողմից, որոշումները կարող են քննարկվել կոլեգիալ կառավարման խորհուրդներում: Որպես ռազմական կառույց, ՌԱՀ-ի կառավարումն ու վարչարարությունն իրականացվում է սահմանված քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, կառավարման մարմինները

գործում են հաստատված աշխատակարգերով, որոնք ապահովում են կառավարման համակարգի կանոնակարգվածությունը: ՌԱՀ-ի գործող կառավարման համակարգը, միտված լինելով ՌԱՀ առաքելության ու նպատակների իրականացմանը, ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց: Որոշումների կայացմանը մասնակցում են ՊՆ համապատասխան վարչությունները՝ որպես արտաքին շահակիցներ: Միևնույն ժամանակ, ՊԴ կազմի ներկայացուցիչները և կուրսանտները պասիվ մասնակցություն ունեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, ինչը կարող է խոչընդոտել ուսումնական հաստատության՝ որպես «համալսարանի» առաջընթացին և գործունեության արդյունավետությանը:

ՌԱՀ-ը ֆինանսական մուտքեր ստանում է ՀՀ պաշտպանության նախարարությունից: Դրական է, որ ՌԱՀում առկա է ֆինանսական միջոցների բաշխման ձևավորված մեխանիզմ: Տարեկան բյուջեում նախատեսվում են որոշակի ծախսեր, որոնք ուղղված են ՌԱՀի նպատակների իրականացմանը, սակայն ծախսերը մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել հասցեական կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները: ՌԱՀ-ը ուսումնական գործունեությունից, դրամաշնորհներից և այլ աղբյուրներից ֆինանսական մուտքեր չունի: Ֆինանսական ներհոսքի աղբյուրների բազմազանությունը կնպաստի ֆինանսական օպերատիվ խնդիրների արդյունավետ լուծմանը և պահուստային ֆոնդի ձևավորմանը:

Դրական են համալսարանի ջանքերը՝ ուղղված որակի ներքին ապահովման համակարգի ներդմանը, շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: Վերջին երկու տարիների ընթացքում կատարված մեծածավալ աշխատանքները հիմքեր են ստեղծել որակի ապահովման համակարգի կայացման համար, որն էլ հետագայում կնպաստի գործընթացների կանոնակարգվածությանը և շարունակական բարելավմանը: Դրական է, որ որակի ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՌԱՀ-ը տրամադրում է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Միևնույն ժամանակ ՌԱՀ-ի ղեկավարությունը մշտապես աջակցում է որակի ապահովման գործընթացների իրականացմանը, իսկ ՈԱՎ բաժնի աշխատակիցներն անցնում են ազգային և միջազգային կառույցների կողմից իրականացվող վերապատրաստումներ: Այս ամենը նպաստում է որակի ապահովման կառույցի կայացմանն ու աշխատակիցների մասնագիտական առաջխաղացմանը: Մյուս կողմից, ռազմական կրթության առանձնահատկություններով պայմանավորված կան անհամապատասխանություններ ՀՀ կրթական դաշտում գործող որակի ապահովման պահանջների հետ (թափանցիկության, տեղեկատվության հասանելիության, գործընթացներում շահակիցների ակտիվ ներգրավման և այլնի):

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերի փաթեթը, լսելով փորձագիտական խմբի ղեկավարի և բուհի ներկայացուցիչների կարծիքները, հաշվի առնելով, որ

ա/ լինելով բարձրագույն ռազմական ավիացիոն, կապի և հակաօդային պաշտպանության ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանում՝ ՊՆ Մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանը լուծում է ՀՀ զինված ուժերը անհրաժեշտ կադրերով ապահովելու կարևոր խնդիր,

բ/ կրթական ծագրերը պատշաճ մակարդակով իրականացնելու համար ՌԱՀ-ը ստեղծել է բավարար ուսումնական միջավայր՝ անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող դասախոսական կազմով,

գ/ ինստիտուցիոնալ կարողություններում վեր են հանվել որոշակի թերություններ.

1) **«Հետազոտությունը և զարգացումը»** ոլորտի թերությունները թուլացնում են համալսարանական գործունեության հիմնական ուղղություններից մեկի՝ գիտական հետազոտությունների տեսակետից ՌԱՀ-ի դիրքերը, հետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապը, կարող են խանգարել շրջանավարտների մոտ վերլուծական կարողությունների ձևավորմանը,

2) **«Արտաքին կապերը և միջազգայնացումը»** ոլորտի թերությունները թույլ չեն տալիս իրականացնել ՌԱՀի առջև դրված միջազգայնացման նպատակները՝ արտերկրի համանման ռազմաուսումնական հաստատությունների հետ համագործակցության խորացումը, ՀՀ բարձրագույն կրթական համակարգին ինտեգրվածության շրջանակի ընդլայնումը, միջազգային փորձի ուսումնասիրումը և ներդրումը ՄԿԾ-ներում,

դ/ փորձագիտական զեկույցում նշված և Հավատարմագրման Հանձնաժողովի արձանագրած թերությունները չեն ազդում կրթական գործընթացների կազմակերպման արդյունավետության և շրջանավարտների որակավորումների շնորհման արժանահավատության վրա,

գ) հաստատության ուժեղ կողմերի, հնարավորությունների և առկա խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ՊՆ անհրաժեշտ աջակցության պայմաններում թերությունների վերացման հաստատության գործողությունների ծրագիրն իրատեսական է,

դ) ներդրված որակի ներքին ապահովման համակարգի միջոցով ուսումնական հաստատությունը կարող է կառավարել իր գործունեության հիմնական ռիսկերը,

Հավատարմագրման Հանձնաժողովը քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան» պետական հիմնարկին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Հետազոտությունը և զարգացումը» և «Արտաքին կապերը և միջազգայնացումը»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) ՌԱՀ-ի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի առանցքային ցուցիչներ (KPI) ունենալու պահանջը,

   գ) Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին ինտեգրվելու Համալսարանի հավակնությունների տեսակետից միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել «համալսարանին» բնորոշ յուրահատուկ միջավայրի կայացմանը, ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը, կառավարման համակարգի բարելավմանը, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը, որակի ներքին ապահովմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 /երկու/ տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ, գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Համալսարանի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ս. Ավետիսյան**
2018 թ. հոկտեմբերի 27
ք.Երևան